Պաշտոնական ընդդիմախոս բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Գուրգենի Մուրադյանի կարծիքը Եվա Ժորայի Մնացականյանի <<Հով-հաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ>> ատենախոսության մասին

Առաջադրված ատենախոսության նշանակությունը կարևորվում է ոչ միայն ամենայն հայոց բանաստեղծի գործի ակնհայտ բացառիկ արժեքայնության բացահայտմամբ, այլև ուսումնասիրության ոլորտ ներառված ժամանակի ազգային գրաքննադատական մտքի ամբողջական գիտական համակարգման առումով: Օրինաչափ է այն մշտատև հետաքրքրությունը, որ ի հայտ է բերել թումանյանագիտությունը ոչ միայն գրողի անձի ու գործի, այլև արդեն շուրջ մեկ դարից ավելի հնչող գնահատումների հիմնարար իրացումների հանդեպ, քանզի դրանք յուրօրինակ անդրադարձ էին այն տեղաշարժերի, որ ունեցել էր հայ քննադատական միտքը բարդ ու իրարամերժ տեսակետների հոլովույթում: Ընդ որում, դժվարին հանգուցային խնդիրների առատությունը պայմանավորված է ոչ միայն Թումանյան գրողի, ազգային գործչի ժառանգության բազմաշերտ բնույթով, այլև մեծ պատմական ընթացքում նրա ընկալման ու արժևորման փոփոխվող չափանիշներով: Այս դեպքում ժամանակը ուրույն դատավորն է նաև քննադատության տեսակետների, որոնց ստուգությունը պարզվում է այսօր իբրև արժևորումների գիտական բնութագիր:

Աշխատությունը մի անգամ ևս բերում է եզրահանգման, որ գիտական ուսումնասիրությունն անքակտելիորեն կապված է քննության մեթոդաբանական ընտրության հետ: Գրական քննադատության գիտական համակարգման մեթոդաբանական, տեսական և պատմական կողմերն ունեն իրենց օրինաչափությունները, որոնք վկայում են գրական-հասարակական երևույթի բարդությունը և յուրաքանչյուր ուսումնասիրողի կողմից այդ բարդությունը գիտակցելու և դրա հետ կապված հետազոտման եղանակի հստակ ինքնորոշման անհրաժեշտությունը: Ահա թե ինչու առանձին արժեք են ձեռք բերում Եվա Մնացականյանի կողմից ընտրված հետազոտության սկզբունքները, որոնք հստակ սահմանագծում են նյութի ոլորտները, բանաձևում համակարգման դրույթները՝ ձգտելով փաստատեսական կառուցիկության: Վերոնշյալ սկզբունքների հետևողական կիրառման միտումներն ակնհայտ են դառնում աշխատության ներածությունից մինչև ամփոփող եզրակացությունները՝ դրսևորելով նրա նպատակաուղղված ջանքը՝ առավել ամբողջական և ընդգրկուն մատուցելու հսկայածավալ նյութը՝ իր պատմական, հասարակական և գեղագիտական արժեքի համազգային նշանակությամբ: Ներածությունը, որտեղ որոշարկվում են ուսումնասիրության նպատակը, խնդիրները, պարզում է և նյութի համակարգման ընտրված տարբերակի բացատրությունը: Կառուցվածքային հնարավոր

տարբերակներից նախապատվությունը տրվել է քննադատության շուրջ 3 տասնամյակների պատմության ժամանակագրական թեմատիկ պարբերացմանը՝ ըստ Թումանյանի ստեղծագործության շրջափուլերի, որտեղ ըստ գլուխների հերթականության առանձնացվել են 19-րդ դարի 90-ական թվականները, ապա 20-րդ դարասկզբի 900-ական թվականների, 1910-ական թ.թ. և 1920-23 թ.թ. գրողի ստեղծագործական և հասարակական գործի անդրադարձները քննադատության մեջ: Առանձին ենթագլխում ներկայացվել են գրողի մահվանից հետո գրված հրապարակումները, որոնք վերլուծության տրամաբանությամբ բաժանելով երկու մասի՝ ձևակերպում են գրողի ստեղծագործության արժեքորումները հասարակական-քաղաքական իրադրության և դասական գեղագիտության չափանիշներով:

Ատենախոսության գլուխների ժամանակագրական պարբերացումը ներառում է յուրաքանչյուր ժամանակահատվածին բնորոշ քննադատության ընթացքի առանձնահատկությունները, որոնք ատենախոսության հեղինակի կողմից բացահայտվում և պայմանավորվում են յուրաքանչյուր փուլի ուրույն օրինաչափություններով՝ վեր հանելով Թումանյանի գործի ընկալման և գնահատման սկզբունքները: Խոշոր քննադատների՝ Մ. Աբեղյանի, Լեոյի, Ա. Տերտերյանի, Լևոն Մանվելյանի, Արշակ Չոպանյանի, Հակոբ Օշականի և այլոց դիմորոշող, հաճախ էլ վիճահարույց կարծիքների հանգամանալի քննությանը ատենախոսը առնչակցել է ժամանակի քննադատական միտքը հայտանշող պրոբլեմային հարցադրումներ: Պատկերն ամբողջացնելու նկատառումներով դիտարկվել են նաև ոչ հայտնի քննադատների արձագանքները: Թումանյանագիտության արդեն ճանաչված նյութի հետ շրջանառության մեջ են դրվել նոր անուններ, նոր փաստեր ու հարցադրումներ, որոնք թելադրված են աշխատության ոչ միայն գիտական, այլև ուսումնական պահանջների անհրաժեշտությամբ:

Ուշագրավ է ատենախոսի միտումը մասնագիտական քննադատական հրապարակումների հետ ներկայացնել նաև գրողի նամակագրության, հուշերից, գրույցներից արձագանքները, որոնցում ոգևորիչ, հիացական կարծիքների հետ հնչել են նաև քննադատական կարծիքներ, ոչ միանշանակ դիտումներ, երբեմն նաև գնահատման ակնհայտ վրիպումներ: Դրանցով ամբողջացվել և առավել հստակ է ուրվագծվել ժամանակի գրական-գեղագիտական մտքի պատկերը, իսկ անաչառ դիտողությունները նպաստել են գրողի գործերի հետագա մշակումների արդյունավետությանը: Ներառված հակասական, նաև մերժող բացասական կարծիքները ատենախոսության նպատակաուղղված շարադրանքով գալիս են հաստատելու, որ իսկական արվեստի գործը փոխաձևում, հարստանում է նրա ընկալման փոփոխվող համատեքստում:

Աշխատության 4 գլուխները՝ իրենց ենթաբաժիններով բովանդակային ընդհանուր տրամաբանությամբ կապակցված, աստիճանաբար ընդլայնում են նյութի քննությունը՝ այնտեղ ներառելով ժամանակի գրաքննադատության ինքնահատուկ

հայտանիշները՝ զուգորդված և պատճառաբանված հասարակական-քաղաքական հանգամանքների, գեղագիտական իմացաբանական խնդիրների տիրույթում: Հատկապես կարևորում ենք ատենախոսի ջանքը՝ ընդգծելու հետազոտության տեսական և բանասիրական քննության միասնության սկզբունքը:

Յուրաքանչյուր ժամանակահատվածի՝ Թումանյանի գործի արժևորումների քննությանը նախորդում են ժամանակի քննադատության տեսական և գեղագիտական ուղղությունների, դպրոցների ուրվագծային բնութագրումները, որոնք անհրաժեշտ հիմք են դառնում նյութի պատմագործառութային քննության համապատկերում: Ըստ Թումանյանի ստեղծագործական շրջափուլերի հերթագայության անդրադարձեր են կատարվում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի քննադատական դպրոցների՝ կուլտուր-պատմական, հոգեբանական, սոցիոլոգիական, մարքսիստական տեսությունների սկզբունքներին, որոնք միանալով կուսակցական, նաև անձնական գործոններին, արտածում են ժամանակի քննադատության բնութագրական հիմքերը: Ընդհանրապես, ատենախոսը հակված է լայնացնելու նյութի քննության շրջանակները: Առհարկի ազգային գրաքննադատության համապատկերի դիմագիծը որոշարկվում է՝ դիմելով ռուս և եվրոպական գրականության, գեղագիտական մտքին զուգադրվող հայեցակարգերին: Արդյունքում Թումանյանի բազմաշերտ ստեղծագործության, հասարակա-հայեցության, գեղագիտության արժևորման դիտանկյունները միավորվելով ի հայտ են բերում ժամանակների հոլովույթում տարորոշվող առանցքային խնդիրներ ստեղծագործական հոգեբանության, գրական ժանրերի, ուղղությունների և գրապատմական այլ հարցադրումների արծարծումներով:

Առանձին քննադատներ՝ Արսեն Տերտերյան, Պողոս Մակինցյան, Նիկոլ Աղբալյան, Սիմոն Հակոբյան, Հ, Օշական և այլք, իրենց հաստատող կամ նույնիսկ վիճահարույց գնահատումներով ատենախոսին բերում են եզրահանգման, որ տարբեր տեսադրույթային հիմնավորումներով ձևավորվում են գրողի գործի արժևորման մեթոդաբանական սկզբունքները, որոնցից զարգացվող ծրագրային կանխագծումները ձեռք են բերում թումանյանագիտության հետագա ուղենշումների հեռահար նշանակություն: Դրա հետ միասին ատենախոսն իր ուսումնասիրության էջերում առավել քան հանգամանալի անդրադառնում է հոդվածների, գրախոսությունների, կարծիքների, որոնք այսօր կարող են հետաքրքրել զուտ պատմական-փաստական նշանակությամբ՝ իբրև գրողի գործի արձագանքների ամբողջական ընկալման պատկեր, ինչի մասին իր հստակ դիրքորոշումն ունի նաև հետազոտողը: Սակայն այդ հանգամանալի անդրադարձները բերել են նաև անհարկի կրկնությունների, որոնք ծանրաբեռնել են ոչ միայն շարադրանքի ծավալը, այլև թույլ չեն տվել ավելի հստակ սահմանազծել գաղափարագեղագիտական չափանիշներով տարբերակվող արձագանքները: Հասկանալի է հետազոտողի հետևողական ջանքը՝ ներկայացնել հնարավորինս ամբողջական փաստական նյութը՝ ամենայն մանրամասներով,

ընդարձակ մեջբերումներով: Թերևս պատճառը նաև շարադրանքի կառուցվածքն է, երբ տարբեր շրջափուլերում հնչել են հայտնի և անհայտ նույն քննադատների, գրախոսների կարծիքներ, որոնց տարբեր առիթներով կրկին անհրաժեշտ է համարել անդրադառնալ ատենախոսը: Այդպիսիք են Բալասանյանի, Լեոյի, Համալյանի և այլ հեղինակների դիտարկումները Թումանյանի տարբեր գործերի մասին, որոնք չեն փոխվել, նույնիսկ, երբ արդեն հայտնի էր գրող, հասարակական գործչի ճանաչման աներկբա մեծությունը:

Փաստական հարուստ նյութի ներառման ձգտումը նաև ինչ-որ չափով ստվերել է տեսական եզրահանգումների հնչողությանը, որն անառարկելիորեն իր կարևոր տեղն ունի ատենախոսի շարադրանքի սկզբունքներում: Կարծում ենք, որ ամենատարբեր առիթներով, բայց նույն հեղինակների տեսակետների խմբավորման համակարգման մոտեցումը առավել կնպաստեր հետազոտության մեջ արդեն առկա գիտատեսական մեկնությունների հայտանշմանը:

Եվս մի դիտողություն, որ վերաբերում է գիտական շարադրանքի մետալեզվին: Գրականագիտական-գեղագիտական ձևակերպումներով հատկանշվող ատենախոսի խոսքում երբեմն հնչում են զգայական-պաթետիկ ձևակերպումներ, որոնք թեև հազվադեպ են, սակայն համահունչ չեն պատմաքննական հայեցության զուսպ մասնագիտական ընթացքին, ինչով բնորոշվում է ուսումնասիրությունն իր համատեքստի ամբողջական տպավորությամբ (էջ 8, 17, 164): Լևոն Հախվերդյանի <<Թումանյանի աշխարհը>> մենագրության բնութագրում կարդում ենք. <<...մեծ վարպետությամբ բացում է հայոց բանաստեղծի գրականության կախարդական աշխարհի դուռը>>, կամ երկրորդ գլխի 2-րդ ենթագլխի վերնագիրը՝<<-<<Բանաստեղծություններ>> 3-րդ ժողովածուն իբրև ժողովրդի սրտի լուռ հառաչանքների ոգեղեն արտահայտություն>>: Կրկնեմ, որ սրանք բարեբախտաբար հազվադեպ են և չեն խաթարում ատենախոսության մասնագիտական վերլուծությունների գիտական ոճի ամբողջական բնույթը:

Աշխատանքի գիտատեսական բովանդակությունն արժևորելով՝ կուզենայինք նշել համալրված գործառույթներով հատկանշվող հարուստ նյութի ընդգրկման համազգային լիարժեք պատկերը: Արևմտահայ հատվածի գրաքննադատության արձագանքները՝ հոդվածների, գրախոսությունների, բանավիճային նյութերի և այլ հրապարակումների ձևով, մանրակրկտորեն քաղված են արևմտահայ, ինչպես նաև հետագա տարիների սփյուռքահայ գաղթօջախների մամուլի էջերից: Փաստական-տեղեկատվական շրջանառման երևույթի հետ ատենախոսը դրանով մեկ անգամ ևս հաստատում է հայ քննադատական մտքի ելակետային դրույթներից մեկը՝ ազգի երկու հատվածների գրականության միասնականության սկզբունքը, որ առավել խորքային նշանակություն է ձեռք բերում Թումանյանի գործի արժևորման լուսաբանման բովանդակությամբ: Նույնպիսի գործառութային իմաստավորմամբ էլ ատենախոսը հանգամանալի անդրադարձով ներկայացնում է ռուս

մտավորականների՝ Յու. Վեսելովսկու, Վ. Բրյուսովի, Ս. Գորոդեցկու տարբեր հրապարակումները, որոնցով լրացվում, ամբողջացվում է Թումանյանի ստեղծագործության արժևորման համալիր գործընթացը:

Ուշագրավ քննությամբ են բնորոշվում ատենախոսության 3-րդ և 4-րդ գլուխներն իրենց ենթաբաժիններով, որոնցից հատկապես կարևորում ենք Արսեն Տերտերյանի << Հայրենի եզերքի քնարերգությունը>> ուսումնասիրության մասին դիտարկումները, ինչպես նաև 1920-23 թվականներն ընդգրկող, շատ կողմերով վերաիմաստավորվող ավանդականի և նորարարության բախման երևույթով դիմորոշվող քննադատության տարամետ անդրադարձները: Այսպիսով գրողի ստեղծագործության՝ ժամանակի մեջ տեսական ընկալումների հետազոտությունը ձեռք է բերում մշակութային-գաղափարաբանական ինքնագիտակցության երևույթ: Մնացականյանի աշխատությունը նյութի ընդգրկման ամբողջականությամբ հնարավորություն է տալիս նորովի ճանաչելու գրողի հզոր անհատականությունը գրականության և հասարակական կյանքի զարգացման հոլովույթում, ճանաչում, որը տեսական - գեղագիտական արժևորումներով առավել հիմնավորված է ներկայացնում նրա մեծության ընկալումը: Եվ այստեղ գիտական քննության, թեմայի ժանրային կայացման երաշխիքը դրույթների հաստատման առումով, նաև չափանիշային ուղեցույցը էլի եղել և մնում է Թումանյանն ինքը: Այդ եզրահանգմանն են բերում նաև ատենախոսի ներկայացրած փաստերը, որոնք կարևորելով՝ նա անդրադառնում է Թումանյանի՝ տարբեր առիթներով հայտնած տեսակետներին:

Դրանք հիմնավորված պատասխաններ են հնչած քննադատական կարծիքներին՝ գրական տարբեր խնդիրների, հուշագրության, կենսագրությունների, մանկագրության, անաչառ քննադատական խոսքի անհրաժեշտության մասին՝ արդյունքում փաստորեն ներկայացնելով գրողի սկզբունքների մշակված մի ամբողջ գեղագիտական հայեցակարգ, որ դառնում է ամուր հենարան նմանօրինակ գրականագիտական հետազոտությունների համար: Դրա լավագույն ապացույցներից են, ի թիվս շատ այլ թումանյանական անդրադարձների՝ աշխատության տարբեր հատվածներում, Դրամփյանին ուղղված հանրահայտ պատասխան հոդվածները, որոնք դուրս գալով արդեն բանավեճի բուն նյութի սահմաններից, ստացել են գործնական նշանակություն՝ որոշարկելով գրականություն-քննադատություն առնչակցությունների դրսևորումները: Ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, դրանք հայ քննադատության պատմության մեջ մնացել են որպես դասական արժեքներ:

Թումանյան-գեղագետի տեսական դրույթների միջարկված կարևոր քննությունը, զուգադրվելով ժամանակի գրաքննադատության համապատկերում, գրականագետի մեկնություններով հստակեցնում և ձևավորում է շուրջ երեք տասնամյակների հայ քննադատության պատմության ուշարժան մի ժամանակահատվածի նկարագիրը:

Ատենախոսության հեղինակը ուսումնասիրության ընթացքով գիտական պատշաճ արդյունքի է հասել ոչ միայն առաջադրույթների բազմակողմանի քննությամբ, այլև Թումանյանի գործի պատմության իմաստային դաշտի ընդլայնմամբ: Ընդհանրապես ողջ շարադրանքի էական արժանիքն է ամբողջական գիտական համակարգման մեջ նոր փաստերի, ճշտումների առաջին անգամ շրջանառելու երևույթը: Կատարվել են բանասիրական ճշտումներ՝ կապված տարբեր հրապարակումների, դրանց հեղինակների, գրության տարեթվերի հետ, ճշտվել են հուշագիրների ներկայացրած որոշ փաստեր, որոշ անստորագիր հոդվածների, գրախոսությունների հեղինակների ինքնությունը և այլն: Թվարկումը կարող է շարունակվել, սակայն բավարարվենք՝ ընդգծելով, որ դրանք բաղադրիչներն են այն հետազոտական նպատակաուղղված աշխատանքի, որի արդյունքն է առաջադրված ատենախոսությունը, ինչն էլ իրավունք է տալիս միջնորդելու հարգարժան խորհրդի առջև՝ Եվա Ժորայի Մնացականյանին շնորհելու բանասիրական գիտությունների դոկտորի՝ իր հայցած գիտական աստիճանը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Գ. Մուրադյան

Ստորագրություն՝

Ստորագրությունը հաստատում եմ

ԵԹԿՊԻ-ի գիտական քարտուղար Գ. Ս. Հովհաննիսյան